

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

TESSA HOFMANN. *Armenier in Berlin, Berlin und Armenien; Mit Beiträgen von Dogan Akhanli und Yelda*. Berlin, 2005, 104 S.

ԹԵՍԱ ՀՈՖՄԱՆ. Հայերը Բեռլինում, Բեռլինն ու Հայաստանը, Դոգան Ակհան-
լիի և Ելդայի հոդվածների հետ միասին, Բեռլին, 2005, 104 էջ:

Բեռլինի սենատի՝ ինտեգրացիայի և միգրացիայի հարցերով պատասխանատու աշխատակից Գյունտեր Պինինգի կողմից այդ քաղաքում բնակություն հաստատած ազգային փոքրամասնությունների վերաբերյալ պարբերաբար լույս ընծայվող տեղեկատու գրականության շարքը վերջերս համալրվեց հայերին նվիրված՝ իր գիտական-տեղեկատվական արժանիքներով և ըստ այդմ նաև քաղաքական նշանակությամբ հիրավի բացառիկ մի աշխատությամբ: Ինը հիմնական բաժիններից և բազմաթիվ ենթաբաժիններից բաղկացած գիտահանրամատչելի տեղեկագիրը, որը հեղինակել է գերմանացի վաստակյալ հայագետ գր. Թեսա Հոֆմանը, և որտեղ առանձին ծավալուն հրապարակումներով հանգես են եկել նաև երկու թուրք գրողներ՝ Դոգան Ակհանլին ու Յելդա Օզկանը, ներկայացնում է Հայ ժողովրդի պատմության կարևորագույն շրջափուլերը՝ սկսած վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը: Առաջին՝ «Հայոց երեքհազարամյա պատմության ուրվագծեր» մասում հեղինակն ամբողջական պատկերացում է տալիս Հայ ժողովրդի անցած պատմական ճանապարհի մասին՝ անգրադառնալով այն կանխորոշող հիմնական քաղաքական անցուղարձերին, ներկայացնելով նախաքրիստոնեական և միջնադարյան Հայ պետական, քաղաքական, գիտական և մշակութային կյանքը, Հայ ազգային եկեղեցու առանձնահատկությունները, նրա խաղացած պատմական դերը, հայոց ցեղասպանության, սփյուռքի առաջաց-

ման պատմությունն ու բազմաթիվ այլ հարակից խնդիրներ: Հաջորդ բաժիններում հանգամանալից պարզաբանման են ենթարկվում մասնավորապես այն իրադարձությունները, որոնք այս կամ այն չափով կապված են Բեռլինի հետ: Ինքնին հասկանալի է, որ խոսքն այս դեպքում պետք է վերաբերի գլխավորապես ցեղասպանությանը և գեո 1878 թ. Բեռլինի կոնգրեսից սկիզբ առած՝ դրա նախապատմությանը: Առանձնապես ուշադրով է «Բեռլինը գրում է Հայոց պատմությունը» վերտառությունն ունեցող բաժինը, որտեղ հանգամանալից լուսաբանվում են Հայկական բարեփոխումների՝ Բեռլինի կոնգրեսում ընդունված փաթեթը, մեծ տերությունների կողմից դրանց տեղական շահարկումները, 19-րդ դարի վերջից թուրքիայում և առհասարակ Մերձավոր Արևելքում ակտիվացող Գերմանիայի արտաքին քաղաքականությունն ու դրա անմիջական ազդեցությունը արևմտահայության ճակատագրում, դերմանա-թուրքական հարաբերությունների հիմնական զարգացումները, 1895-97 թթ. հայկական կոտորածները, Ադանայի ջարդերը, հայոց Մեծ եղեռնը, դրա ծավալը, իրագործման մեթոդներն ու հետևանքները: Հատկանշական է, որ համեմատաբար սեղմ ծավալում նման մեծաքանակ հարցերի ընդգրկումն ամենևին էլ նվազեցրել աշխատության դիտական նշանակությունը: Տեղեկագրի անվիճելի առավելություններից մեկը պետք է համարել նաև այն հանգամանքը, որ վերոնշյալ հարցերի պարզաբանումը կատա-

րելիս գր. Թեոսա Հոֆմանը հենվում է ոչ թե նախկինում կատարված ուսումնասիրությունների, այլ գլխավորապես գերմանական դիվանագիտական տեղեկագրերի վրա, որոնց մեծագույն մասն առանձին ժողովածուներով հրապարակվել է միայն վերջին տարիներին: Եթե նկատի առնենք, որ այդ նորահայտ տեղեկագրերում ամբարված առատ և արժեքավոր փաստական տվյալները ոչ միայն լայն հասարակայնությանը դեռ մատչելի չեն դարձել, այլև նույնիսկ ուսումնասիրողների կողմից ըստ ամենայնի չեն հետազոտվել, ապա պարզ կդառնա, թե որպիսի՝ մեծ նշանակություն է ձեռք բերում վերոնշյալ սկզբնաղբյուրների տեղեկությունների հրապարակումը 30000 տպաքանակ ունեցող այդ աշխատությունում, որը նախատեսված է ոչ թե նեղ դիտական շրջանների, այլ զանգվածային ընթերցողի համար: Կարելի է միանշանակորեն ասել, որ իբրև այդպիսին, այն իր նախադեպը չունի: Միակ բացառությունը կարող էր թերևս համարվել գր. Յոհաննես Լեփսիուսի կողմից 1916-ին 20000 տպաքանակով հրատարակված «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրուժյան վերաբերյալ» ժողովածուն, որը, սակայն, պատերազմի տարիներին իշխող դրաքննության պայմաններում հասարակայնությանն այնչափ մատչելի չէր կարող դառնալ, ինչպես Բեռլինի սենատի հովանավորությունը և միջոցներով լույս ընծայված՝ Թ. Հոֆմանի սույն աշխատությունը: Բնականաբար, վերջինս պետք է ստանար նաև համարժեք, ասել է՝ թե նմանապես աննախագեղ ընդունելություն և արձագանքներ, որոնք, իհարկե, չուղացան: Հատկանշական է, որ դեռ տեղեկագրի զանգվածային հրատարակությունից առաջ՝ հունիսի 9-ին Թուրքական «Հուրիեթ» թերթը հանդես եկավ «Բեռլինի մեծ խայտառակությունը» վերնագրով մի «ահազանգով» տեղեկացնելով պարբերականի առաջիկա հրատարակման մասին, արտառվելով նրանում տեղ գտած որոշ լուսանկարներ և իր գայլուշտ արտահայտելով առ այն, որ այնտեղ խոսվում է «սիստեմատիկ կերպով սպանելի ենթարկված 1,5 միլիոն հայերի» մասին: Հաջորդ օրը Թուրքիայի կառավարությունը պարզաբանում պահանջելու և

պարբերականի զանգվածային հրատարակությունը կանխելու նպատակով կառավարության շենք կանչեց Անկարայում Գերմանիայի դեսպանին, իսկ Բեռլինում Թուրքիայի գլխավոր հյուպատոսը հատուկ տեսակցություն ունեցավ հրատարակչի՝ Գ. Պինինգի հետ՝ փորձելով խափանել հրատարակությունը և պնդելով, որ պարբերականում «միակողմանիորեն» միայն հայկական տեսակետներն են տեղ գտել:

Թուրքական բողոքները, սակայն, միանգամայն հակառակ արդյունքն ունեցան՝ արագացնելով աշխատության լույսընծայումը: Դա նախատեսված էր իրականացնել հունիսի վերջին, սակայն տեղեկագրի հակառակորդների կողմից ծայր առած քարոզարշավի, կամայաժին մեկնաբանությունների հետագա ծավալումը կանխելու նպատակով այն լույս ընծայվեց հնարավորինս շուտ՝ հունիսի 13-ին:

Եթե նկատի առնենք, որ երեք օր անց՝ հունիսի 16-ին Բունդեսթագը պետք է ընդուներ հայոց ցեղասպանությունը վերաբերող՝ դեռ ապրիլին քննարկման թեմա դարձած բանաձևը, ապա պարզ կդառնա, թե որքան կարևոր քաղաքական նշանակություն ուներ այդ տեղեկագրի վաղ լույս ընծայումը, որը բանաձևի հաստատումից դեռ երեք օր առաջ հասնելի դարձավ գերմանացի պառլամենտականներին: Թուրքական կողմի բողոքը, այնուհանդերձ, դեռ շարունակվելու էր՝ իր գազաթնակետին հասնելով հունիսի 19-ին Բեռլինում կազմակերպված զանգվածային ցույցում, որն ուներ մի քանի հազար մասնակիցներ, և ուղղված էր երկու հիմնական իրադարձությունների՝ Բունդեսթագում վերոնշյալ բանաձևի ընդունման և գր. Թ. Հոֆմանի տեղեկագրի դեմ:

Թուրքական բողոքն ու մուլեգին քարոզարշավը, փաստորեն, ուղղված էին մի աշխատության դեմ, որի հեղինակներից մեկը գերմանացի, իսկ մյուս երկուսը գտարյուն թուրքեր են. հանգամանք, որ դրանում է առավել զավեշտով, քան լրջությամբ հետևել այդ քարոզարշավին, որը, բնականաբար, որևէ արդյունք ունենալ չէր կարող: Տեղեկագրում դեպքերն ու իրադարձություններն այն աստիճան փաստարկված և հիմ-

նավորված են ներկայացվում, որ թուրքական կողմի՝ վերոնշյալ բողոքները սովորական աղմկարարության սահմաններից գուրս գալ և լրջմիտ քննադատության ուղիով թափանցել չէին կարող, ուստի, ինքնին հասկանալի է, թուրք «քննադատները» որպես կանոն հարկադրված էին բավարարվել քաղաքական սլոտակավորում ունեցող մեղադրանքներով և անձնական վիրավորանքներով, մինչդեռ տեղեկագրի բովանդակության առնչությամբ երբեք որևէ քննադատություն չհնչեց: Նման ելույթները, բնականաբար, որևէ ազդեցություն չէին կարող գործել նաև Բեռլինի սենատի և Գյուլենտեր Պինինդի վրա, որը, ինչպես վկայում է աշխատության նրա իսկ կողմից հեղինակած առաջաբանը, բավականաչափ իրադեկ էր ինչպես աշխատության թեմատիկ հարցերին, այնպես էլ դրանց դիտական նշանակության ու արդիականությանը և, ինչպես նշում է նա իր առաջաբանում, «Հայերի պատմությունը մինչև այժմ էպոս կերպավորվում է սփյուռքի, ամենից առաջ, իհարկե, ԱՄՆ-ի և նաև Ֆրանսիայի համայնքների հետ համատեղ: Մի սփյուռք, որն առաջին հերթին նախկին Հայկական բնատարածքներում իրագործված հալածանքների, հետապնդման և բնաջնջման քաղաքականության հետևանքով է ստեղծվել՝ Հայերի հիմնական պատմական ողբերգության, որը միջադարձայնորեն մինչև այժմ անբավարար չափով է քննվել: Միաժամանակ ոչ միայն Հայերի համար է ցավալի, որ նրանց պատմությունը պատմության դասագրքերում մինչև այժմ հաճախ լուսանց է մղվում և, ինչպես առաջ, դիվանագիտական դետոնի վրա՝ նաև վիճարկվում է, թե արդյոք Հայոց ցեղասպանությունը կարո՞ղ է այդ անվանումն ունենալ: Գերմանիայի և մասնավորապես Բեռլինի համար դա մեկուսի ափսոսանք է քննարկման խնդիր չէ: Հայ սփյուռքի պատմության հիմնական գլուխները միանգամայն որոշակիորեն այստեղ են համահեղինակվել: Օսմանյան կայսրությունում և Երիտասարդ թուրքիայի հանրապետությունում Հայերի կոտորածների և հալածանքների համար գերմանացիները կրում են ուղղակի համապատասխանատվություն...: Մյուս կողմից

գերմանացիները, ինչպես օրինակ, Յոհանես Լեփսիուսը, փաստագրել են Հայերի հալածանքներն ու զանգվածային սպանդը: Նախկին թուրքական ՆԳ նախարար Թալեթ փաշայի դեմ Հայ ուսանող Սողոմոն Թեհլերյանի ձեռքով 1921-ին իրագործված ահաբեկչությունը տեղի է ունեցել Բեռլինի Հարդենբերգի փողոցում: Փաստեր, որոնց վերաբերյալ ոչ-Հայերի մեծ մասն այսօր խիստ նվազ իրազեկում ունի: Խիստ կարևոր է նաև սեփական պատմության տհաճ և մութ գլուխներին դիմադրած կանգնելը: Նացիոնալ-սոցիալիստների կողմից իրագործված ցեղասպանությունն այսօր վիճարկման ենթակա չէ, մինչդեռ Գերմանիայի պատմության այլ գլուխներ դեռ այդչափ պարզաբանված չեն: Խորհենք, օրինակ, Հարավարևմտյան Աֆրիկայի գերմանական գաղութում, այսօրվա Նամիբիայում կատարված ցեղասպանության կամ Հայերի հալածանքներում Գերմանիայի խճճման մասին: Սեփական պատմությանը դիմադրած կանգնել չկամենալը տանում է փակուղի...: Այսօրվա դպրոցական դասարաններում նստած են նաև երեխաներ, որոնց ընտանիքները հաճախ փախուստի, հալածանքների և հետապնդումների վերաբերյալ իրենց սեփական հիշողությունն իրենց հետ բերել են Գերմանիա, մի հիշողություն, որի հետ նրանք հազվադեպ չէ որ միայնակ են թողնվում...: Նրանց պատմությունը չպետք է անտեսվի: Այդ առումով ես ողջունում եմ, որ սույն աշխատանքը Հայոց պատմության և մշակույթի մի քաջագիտակ փորձագետի կողմից է կազմվել և նաև Թուրքիայում շարունակ ավելացող այն ձայներն է դեպի իրեն գրավում, որոնք երբեմն անախորժ սեփական պատմության բացորոշ քննություն են պահանջում: Դր. Թեոսա Հոֆմանը մի լայն աղեղ է դնել, որը ետ է տանում մինչև Հայոց պատմության և մշակույթի սկիզբները: Այստեղ ևս Բեռլինի հետ բազում առնչություններ են ի Հայտ գալիս՝ Հայագիտական հետազոտական աշխատանքի մեծ ավանդույթի միջոցով: Նա պարզաբանում է Հայերի հալածանքներում և սպանդի մեջ Գերմանիայի խճճվածությունը, ճիշտ այնպես, Շալերի

մոտ գտնվող Հայ Համայնքի պատմություններ»:

Աշխատությունը, որն առատ է ինչպես վաղ անցյալի Հայ իրականությունը, այնպես էլ Հայոց ցեղասպանությունը, սփյուռքը, պատմական կարևոր դերախաղացությունը ունեցող Հայ, գերմանացի և այլազգի գործիչներին, ինչպես նաև Բեռլինի Հայ Հասարակական կյանքը ներկայացնող մեծարժեք լուսանկարներով, տվյալ թեմաներով հետաքրքրվող լայն Հասարակական շրջանների համար բառի բուն իմաստով ու-

նի Հանրագիտարանային արժեք: Այն միաժամանակ Բեռլինի Հայկական կազմակերպությունները և Հաստատությունները ներկայացնող կարևոր տեղեկատու է և իբրև այդպիսին ևս իր նախադեպը դեռ չի ունեցել:

Միանշանակորեն կարելի է ասել, որ ի Հայտ է եկել մի ուսումնասիրություն, որն ունի դասագրքային ճշգրտություն և կոչված է դառնալու Համապատասխան Հարցերով զրադվող՝ ոչ միայն ներկայիս, այլև գալիք սերունդների սեղանի գիրքը:

TESSA HOFMANN (Hg.), *Verfolgung, Vertreibung und Vernichtung der Christen im Osmanischen Reich 1912-1922; Mit einem Geleitwort von Bischof Dr. Wolfgang Huber*, Münster, 2004, 266 S.

ԹԵՍԱ ՀՈՖՄԱՆ (Հրատարակիչ). Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների հետապնդումը, վտարումն ու բնաջնջումը 1912-1922 թթ., Մյունստեր, 2004, 266 էջ:

2002 թ. ապրիլի 26-28-ը Բեռլինում «Նոստենք մեկ ձայնով» նշանաբանի ներքո տեղի էր ունեցել մի գիտաժողով, որը կազմակերպել էր մի շարք Հայկական, ասորաբարձական և հունական ընկերությունների Հենքի վրա ստեղծված նույնանուն «Նոստենք մեկ ձայնով» կազմակերպությունների կոմիտեն: Կազմակերպությունը, որն իր հիմնական նպատակը համարում է Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների Հանդեպ 1912-1922 թվականներին իրադրված ոճրագործությունների իբրև ցեղասպանության, միջազգային ճանաչումն ու գատապարտումը, գիտաժողովի կազմակերպմամբ ձգտում էր ոչ միայն ըստ ամենայնի լուսաբանել Թուրքիայում ապրող քրիստոնյաների ողբերգական ճակատագիրը, այլև հիմնավորել, որ Հայերի, ասորիների, ինչպես նաև Արևելյան Թրակիայի և Փոքր Ասիայի հույների Հալածանքներն ու բնաջնջումը առանձին իրողություններ չէին, այլ մեկ ընդհանուր պետական ցեղասպանական քաղաքականության հետևանքն էին:

Եթե նկատի առնենք, որ գիտաժողովը, իբրև այդպիսին, ոչ միայն Գերմանիայում, այլև աշխարհի ողջ գերմանախոս տարա-

ծաշրջանում իր նախագեպը չէր ունեցել, ապա պարզ կզառնա, թե որքան կարևոր էր դրա Հրապարակայնացումը: Ուրախությամբ պետք է արձանագրել, որ, չնայած զգալի ուշացմանը, գերմանացի ընթերցողը 2004-ին վերջապես հնարավորություն ունեցավ իրազեկվել գիտաժողովում ընթերցած բոլոր զեկուցումներին, որոնք «Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների հետապնդումը, վտարումն ու բնաջնջումը 1912-1922 թթ.» խորագրով, առանձին ժողովածուով լույս ընծայվեցին Մյունստերում: Ժողովածուն կազմել և խմբագրել է ճանաչված Հայագետ գր. Թեսա Հոֆմանը, իսկ առաջաբանը գրել է Գերմանիայի Ավետարանական եկեղեցու խորհրդի նախագահ Եպիսկոպոս դր. Վոլֆգանգ Հուբերը՝ գրանով ինքնին փաստելով Ավետարանական եկեղեցու Համերաշխությունը գիտաժողովում հնչած ելույթներին և իր կողմից ևս կարևորելով քրիստոնյաների՝ «բոլոր ժամանակների մեծագույն սպանգի» զոհերի հիշատակը մշտապես վառ պահելու անհրաժեշտությունը: «Թո՛ղ այս գրքի Հրատարակումը նպաստի այն բանին, որ այն ժամանակվա ոճրագործությունների զոհերի հիշատակը կենդանի մնա, — նշում է նա իր ա-

ռաջաբանում, — թո՛ղ այն հակազդի այդ իրադարձությունները խեղաթյուրելու և հետին պլան վանելու բոլոր միտումներին, և թո՛ղ մեզ բոլորիս գիտակցությանը հասցնի տեղի ունեցածից բխող մեր պատասխանատվությունը» (էջ 3):

Հատկանշական է, որ հանձնարարողն անձամբ ևս հարկ է համարել ընդգծել, որ Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների հալածանքներն ու բնաջնջումը առաջին հերթին ոչ թե կրոնական, այլ քաղաքական դրգասպատճառներ ունենին, և դրանք պատկանում են համաշխարհային պատմության այն մուլթ գլուխներից մեկին, որը, գեոստացած չլինելով իր միանշանակ գնահատականը՝ չի կարող նաև ավարտված համարվել:

Դր. Թեոս Հոֆմանի կազմած և խմբագրած ժողովածուն սկսվում է գիտաթողովի բացումը կատարող հենց իր իսկ ծավալուն գեկուցմամբ, որտեղ նախ լուսաբանվում է Թուրքիայի վերոնշյալ երեք էթնիկական խմբերի հանդեպ իրագործված և ցեղասպանությանը վերաբերող միջազգային բոլոր կոնվենցիաներին համապատասխանող ոճրագործությունները համատեղ քննելու և լուսաբանելու կարևորությունը, որը, ինչպես գեկուցողն էր նշում, առայսօր խիստ հազվագեպ է կատարվել: Այնուհետև հեղինակն անցում է կատարում բոլոր երեք ցեղասպանությունների նախապատմությանը, լուսաբանում դրանց կազմակերպման և իրագործման հիմնական մոտիվները՝ մեկ անգամ ևս հերքելով քրիստոնյաների տեղահանումը պատերազմի թեղադրանքով, իսկ նրանց հանդեպ իրագործված բռնարարքներն ու ոճրագործություններն իրադրության անվերահսկելիությամբ պատճառաբանող՝ Թուրքական պատմագիտության տեսակետները: Համեմատական զուգահեռները, որոնք Թ. Հոֆմանն անցկացնում է հայերի և ապա ասորիների ու հույների հետ կատարված իրադարձությունների հանդեպ, ուղեկցվում և հիմնավորվում են ինչպես նախճիրից մաղապուրծ զոհերի, այնպես էլ գերմանացի և այլ եվրոպացի ականատեսների բազում վկայություններով:

Հատկանշական է, որ հեղինակը բացահայտում և հանգամանալից քննության է ենթարկում նաև երիտթուրքական ռեժիմի

ու ջեմայական շարժման օրգանական կապը՝ Քեմալի կառավարության կողմից դեռևս ողջ մնացած քրիստոնյաներին մասամբ բռնի մահմեդականացնելու և մասամբ երկրից վտարելու իրողությունը բնութագրելով որպես Թուրքիայի քրիստոնյաների ցեղասպանության գործընթացի բնականոն շարունակությունն ու տխրահուշակ եղրափակումը: Դա լավագույնս վկայում էր հենց ինքը՝ Մուստաֆա Քեմալը, իր խիստ ուշադրավ դիտողությամբ. «Այն ամենը, ինչ մեր երկրում ապրող ոչ մահմեդական տարրերի հետ պատահել է, նրանց կողմից վարված անջատողական քաղաքականության հետևանք է, մի քաղաքականության, որն ի հայտ է եկել արտասահմանյան ինտրիգներից և այն արտոնությունների չարաշահումից, որոնք մենք տվել էինք նրանց» (էջ 32):

Ուշագրավ է նաև ասվածի վերաբերյալ Հոֆմանի կողմից տրված գնահատականը. «Թուրքական հանրապետության հիմնադրի այդ խոսքերը բովանդակում են Թուրքական արդարացման և ժխտման՝ մինչև այսօր գործածվող ռազմավարության բոլոր տարրերը. արտաքին ուժերի մուլթ մեքենայությունների անհեթեթ մատնացուցումը, ցուցադրական վրդովմունքն իբրև թե արտոնություններ ստացած ոչ մուսուլմանական էթնոսների անշնորհակալության հանդեպ և ինքնապաշտպանության նպատակ հետապնդող պնդումը, թե սոսկ արձադանքվել է մի առկա սպառնալիքի: Յեղասպանների ըմբռնմամբ միշտ զոհերն են մեղավոր» (նույն տեղում):

Մարդու և միջազգային իրավունքների տեսանկյունից ներկայացնելով կատարված ոճրագործությունների իրավաքաղաքական գնահատականն ու վերլուծությունը՝ հեղինակը հոգևածի վերջին հատվածում սուր քննադատության է ենթարկում ցեղասպանության ժխտման՝ Թուրքական պաշտոնական շրջանների և պատմաբանների ջանքերը՝ հարցի արդարացի գնահատմամբ և լուծմամբ չահազրգույն բոլոր անձանց ու կազմակերպություններին կոչ անելով միավորվել՝ «ցեղասպանության, պետականորեն կազմակերպված զանգվածային բռնությունների, հալածանքների և էթնիկական

զտումների» դեմ «մեկ ձայնով խոսելու համար»:

Դր. Հոֆմանի ելույթին հաջորդող՝ դիտաժողովում ընթերցված մյուս զեկուցումները խմբավորված են երեք հիմնական բաժիններում: Դրանցից առաջինում ներառված են հայոց ցեղասպանությանը, իսկ մյուս երկուսում՝ ասորիների և հույների ցեղասպանությանը վերաբերող ելույթները: Ընդ որում, հայկական բաժինը հիմնականում բովանդակում է դր. Ժիրայր Քոչարյանի «Հայոց ցեղասպանությունը (1915-1917)» և դր. Տիգրան Սարգսյանի «Հայոց ցեղասպանության նյութական պատասխանատվության հարցը և Անգլիան» ծավալուն զեկուցումները, որոնք երկուսն էլ բնութագրվում են փաստական խիտ հագեցվածությամբ, քննական արժեքավոր վերլուծություններով և, որ ոչ պակաս կարևոր է, բազմաթիվ, գլխավորապես նորահայտ սկզբնաղբյուրների օգտագործմամբ: Ինչպես Թ. Հոֆմանի, այնպես էլ երկու հայ հեղինակների զեկուցումներն այն աստիճան կենդանի և խոսուն են ներկայացնում հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունը, որ ընթերցողին կարծես թե տանում են այդ իրադարձությունների ժամանակաշրջանն ու վայրերը՝ ակամա դարձնելով հայոց ցեղասպանության՝ 21-րդ դարի ականատեսներ: Եթե նկատի առնենք, որ ժողովածուն նախատեսված է գերմանացի ընթերցողի համար և հրատարակվել է Գերմանիայում, մի երկրում, որտեղ հայոց ցեղասպանության հերքման թուրքական պատմագիտության և թուրքիայի պաշտոնական շրջանների ջանքերը միշտ առանձնապես վճռական են եղել, ապա պարզ կդառնա, թե աշխատությանը որպիսի կարևոր առաքելություն է վերապահված:

Ուշագրավ և հետաքրքիր են նաև ժողովածուի մյուս երկու բաժինները, որոնք սկսվում են դարձյալ Թ. Հոֆմանի «Թրակիա» և «Պոնտոս ու Կապադոկիա» խորագրերն ունեցող ներածական ելույթներով: Այդ բաժիններում ամփոփված պրոֆ. դր. Մարտին Թամկեի, պրոֆ. դր. Կոնստանտինոս Վոտիադիսի, Հարրի Յիրկինդիսի, պրոֆ. դր. Կոնստանտինոս Վակալոպոլիսի, Ամիլ Գորգիսի, Միխաիլ Շարլամբիդիսի զեկուցումները հնարավորություն են ընձե-

ռում ոչ միայն հանդամանալից իրազեկվել ասորիների և հույների հանդեպ իրագործված ոճրագործություններին, այլև դրանք դիտել հայոց ցեղասպանության համատեքստում հասու դառնալով այն փոխառնչություններին, ընդհանրություններին և նաև զանազանություններին, որոնցով բնութագրվում էին երեք քրիստոնյա ժողովուրդների եղբրական ճակատագրերը: Բնականաբար, գրքի այդօրինակ թեմատիկ ընդգրկումը ևս յուրօրինակ է և բազմաթիվ նոր ու հետաքրքիր տեղեկություններ է պարունակում նաև հայ ընթերցողի համար:

Ժողովածուն եզրափակվում է «Մանկությունը ցեղասպանության մեջ» խորագիրը կրող բաժնով, որտեղ ամփոփված են ծագումով ասորի, ամերիկաբնակ Թեա Հալոյլ՝ իր մորը վերաբերող «Երեք չտա՛ք իմ անունը» և հայ, նույնպես ամերիկաբնակ Ադամ Բաղդասարյանի՝ իր հորեղբոր մասին պատմող «Մոռացված կրակ» գրքերից քաղված խիստ ազդու և սրտառու հատվածներ:

Գրքի նշանակության շուրջ կարելի է շարունակ խոսել: Նրա ետին շապիկի վրա կարգախոսային հստակությամբ ձևակերպված եզրահանգումը, սակայն, մեր կարծիքով, արդեն իսկ բավական է՝ ընթերցողին ամբողջական պատկերացում տալու այդ մասին: «Բազմակրոն և բազմազգ Օսմանյան պետության վերափոխումը միջնորոշ ազգային պետության, — նշված է այնտեղ, — հանդիսանում է թուրքիայի հանրապետության հիմնադրմանը հանգեցնող ոճիրը: Թուրք պատմաբանները մինչև այժմ վիճարկում են, որ տեղաբնիկ քրիստոնյա բնակչության դեմ իրագործված միջոցառումների պարագայում խնդիրը վերաբերում էր պետականորեն ծրագրված և դեկավարված ցեղասպանության: Այս հատորի հոդվածները հնարավորություն են ընձեռում առաջին անգամ ամբողջական հայացք նետել Փոքր Ասիայի և Արևելյան Թրակիայի քրիստոնյա էթնոսների (հայեր, ասորիներ, ինչպես և հույներ) հետապնդման և բնաջնջման գործընթացի վրա: Այդ իրադարձությունները մինչև այժմ առանձին-առանձին են ընկալվել և հետազոտվել: Միայն համեմատությունն է, սակայն, հնարավորություն ընձեռում հասկանալ Օս-

մանյան պետության վերջին շրջանի պատմությունը՝ դեպի ներկան բերող շեմի վրա: Առնվազն Հինգ միլիոն քրիստոնյաների արմատահամար, որոնցից ավելի քան երեք միլիոնը կոտորածների կամ մահերի ժամանակ սպանվեցին, Հայերի, Հույների, ինչպես և ասորիների երեքհազարամյա ներկայությունը Փոքր Ասիայում հասավ իր վախճանին»:

Ինչևէ, կարելի է վստահաբար ասել, որ ժողովածուն համալրում է Հայոց ցեղասպանությանը, նաև ասորիների և հույների զանգվածային բնաջնջման պատմությանը վերաբերող՝ առայսօր կատարված լավագույն գիտական հրապարակումների շարքը, և ցանկալի կլինի, որ այն մոտ ապագայում թարգմանվեր և լույս ընծայվեր նաև հայերենով:

Gemeinsame kulturelle Codes in Koexistierenden Religionsgemeinschaften Leucorea-Kolloquium 2003. Herausgegeben von Ute Pietruschka. Halle (Saale), 2005, 264 S.

Ընդհանուր մշակութային կոդեր կողք կողքի գոյատևող կրոնական համայնքներում: Արևելագիտության բնագավառն ընդգրկող՝ Զալլեում ընթերցված գեկուցումներ, հրատարակված Ուտե Պիետրուշկայի կողմից, Հալլե (Ջալե), 2005, 264 էջ:

Հալլեի Մարտին Լութերի անվան համալսարանի արևելագիտության ինստիտուտում վերջերս լույս ընծայվեց 2003 թ. մայիսի գիտական նստաշրջանում ընթերցված գեկուցումների ժողովածուն, որը համատեղ գոյատևող քրիստոնյա համայնքների ինդերիներին վերաբերող «Լոյկորեա» և «Գերմանական գիտահետազոտական ընկերակցություն» հիմնադրամների աջակցությամբ դեռ 1979-ից լույս ընծայվող շարքի 38-րդ թողարկումն է: Ինչպես արդեն իսկ գրքի խորագիրն է վկայում, գեկուցումներում միանգամայն նոր, դեռևս սակավ հետազոտված և միաժամանակ արևելագիտության համար մեծ կարևորություն ունեցող հարցեր են քննության ենթարկվում, և, անկասկած, նաև դա էր պատճառը, որ գրքին առանձնահատուկ ջերմ և դրվատալից արձագանքներ ստացավ ինչպես գիտական հասարակայնության, այնպես էլ այլ ընթերցող շրջանների կողմից:

Ժողովածուի հետ մանրազնին ծանոթությունը ցույց է տալիս, որ բոլոր ընդհանուր թվով 13 հեղինակներն էլ, որպես կանոն, քսի իրազեկ են Արևելքի քրիստոնեական եկեղեցիների և համայնքների պատմության ու հիմնական առանձնահատկություններին, ինչն էլ նրանց հնարավորություն է ընձեռել խնդրո առարկա

հարցերի քննության շրջանակներում կատարել պատմահամեմատական ուշադրավ վերլուծություններ: Այդ հանգամանքը, ինչպես նաև ելույթներում քննության առարկա դարձած հարցերի բազմազանությունը, գեկուցողներին որոշակիորեն հնարավորություն է ընձեռել շարունակել և ամբողջացնել միմյանց պարզաբանումները՝ տալով տվյալ հարցի կամ հարցերի շարքի հնարավորինս համակողմանի լուսաբանում: Դորոթեա Բաուդին, օրինակ, որին պատկանում է ժողովածուի առաջին հոդվածը, փորձում է տարբեր կրոնական դավանանքներում առկա ընդհանուր մշակութային կոդերը արժեքել որպես վերջնական և անշրջելի իսրադոլության հաստատման կարևոր նախադրյալներ՝ անցյալի պատերազմների, միջկեղեցական և միջհամայնքային պայքարի հիմնական շարժառիթներից մեկը համարելով դրանց շարունակական անտեսումը: Հաջորդ գեկուցողը՝ Գերհարդ Բաուդին, այն տեսակետն է զարգացնում, որ ընդհանուր մշակութային կոդերի հայտնաբերումն ու ճանաչողությունը կարևոր նշանակություն ունեն ազգային մշակույթների վերածնման կամ զարգացման համար: Իր իրողություն, որը, նրա համոզմամբ, համաշխարհային պատմությունն արդեն բազմիցս փաստարկել է:

Բերտրամ Շմիթցը փորձում է կատարել հարցի աստվածաբանական և փիլիսոփայական քննությունը՝ ի վերջո հանդելով այն եզրակացություն, որ արտաքուստ միմյանցից խիստ հեռու երեք կրոնները՝ հրեականությունը, քրիստոնեությունը և իսլամը իրականում մեծաթիվ ընդհանուր օրինաչափություններ և ներքին սերտ փոխառնչություններ ունեն, որոնք զլիսավորապես պայմանավորված և թելադրված են ըրոր երեք կրոններում էլ առկա մշակութային կոգերով: Բացի այդ, հեղինակը հիմնավորում է, որ այդ երեք կրոններից յուրաքանչյուրն իր էական ներդրումն է ունեցել արևմտյան փիլիսոփայության զարգացման հարցում, քանի որ «ներանք փիլիսոփայությունը իրենց աստվածաբանական թեմաներով և հարցադրումներով որոշակի սպեցիֆիկ կերպարանք են տվել»: Միաժամանակ առկա է նաև հակառակ իրողությունը. արևմտյան փիլիսոփայությունը ևս իր մտածելակերպով ու հարցադրումներով էապես ներազդել է տվյալ տարածաշրջանների աստվածաբանական մտքի վրա: Այս իսկ ելակետով Բ. Շմիթցը առանձին կերպով հանդամանալից անդրադառնում է վերոնշյալ երեք կրոնների այն հիմնական ընդհանրություններին, որոնց ձևավորման և զարգացման հարցում փիլիսոփայությունը որոշակի դեր է խաղացել՝ այդ կերպ հիմնավորելով նաև փիլիսոփայության նշանակությունը վերոնշյալ կրոններում նույնատեսակ մշակութային կոգերի ձևավորման հարցում:

Հետաքրքրաշարժ և ուշադրավ տեղեկություններ է պարունակում նաև պրոֆ. դր. Մարտին Թամկեի «Փոքրամասնությունների հոգեբանությունը և մշակութային կոգերը» խորագրով զեկուցումը: Ելնելով իր ուսումնասիրություններից՝ նա այն տեսակետն է զարգացնում, որ իրավիճակի կտրուկ, շրջադարձային փոփոխությունների դեպքում մշակութային կոգերի փոփոխումն ու նոր իրավիճակին համապատաս-

խանցման գործընթացը չափազանց դանդաղ է կատարվում: Իբրև ասվածի հիմնավորում՝ նա վկայակոչում է Մերձավոր Արևելքի առանձին տարածաշրջաններում երբեք մեծամասնություն, իսկ հետագայում կոտորածների, ձուլման կամ արտագաղթի հետևանքով ազգային փոքրամասնություն դարձած քրիստոնյաների, մասնավորապես ասորական համայնքների օրինակը, որոնց վարքադիժը նոր իրավիճակում ևս ձևավորվում է վաղեմի ազգային մեծամասնությունը բնորոշ մշակութային կոգերի հենքի վրա:

Ինչպես Մ. Թամկեն, այնպես էլ մյուս զեկուցողներից շատերն այն տեսակետն են արտահայտում, որ բնականոն հարևանային փոխհարաբերությունների պայմաններում որպես կանոն առկա է ընդհանուր մշակութային կոգերի ձևավորման կամ առկա մշակութային կոգերի փոխներգաշնական և համապատասխանեցման գործընթացը՝ իր ըրոր դրական հետևանքներով, ինչը, սակայն, հակամարտությունների, ազգային թշնամանքի և այլ նման իրավիճակներում պարզապես բացառված է:

Ժողովածուում հրատարակված հոդվածները, որպես կանոն, հատկանշվում են հարցերի բազմակողմանի քննությամբ, ուշադրավ վերլուծություններով և եզրահանգումների հետեղական հիմնավորմամբ ու փաստարկմամբ: Ձնայած դրան, որոշ ելույթներում իրավացիորեն ընդգծվում է նաև այն հանդամանքը, որ քննության ենթակա հարցերի շրջանակը չափազանց մեծ է, և արևելագիտությունը դեռևս շատ անելիքներ ունի թեման լիովին յուրացված և պարզաբանված համարելու համար: Ըստ այդմ պետք է ակնկալել, որ գերմանացի արևելագետների այս խիստ ողջունելի նախաձեռնությունը կունենա իր արդյունավետ շարունակությունը՝ նոր գիտաժողովների և հրապարակումների միջոցով շարունակելով ոլորտին վերաբերող հարցերի գիտական պարզաբանումը:

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ